Սիրելի բարեկամներ

Տասը տարի առաջ, իմ կողմից հարգելի մարդկանց նախաձեռնությամբ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ստեղծվեց «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որն այսօր հանդիսանում է մեր ուսումնական հաստատության և տնտեսագիտական հանրույթի գիտական, հետազոտական մտքի կրողն ու յուրօրինակ այցեքարտը:

Իր 10-ամյա գործունեության ընթացքում հետազոտական կենտրոնը ոչ միայն դրական հետագիծ է թողել ՀՊՏՀ հարուստ գիտահետազոտական պատմության էջերում, այլ նաև բարձր վարկանիշ է ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս:

Մեր դասախոսները, ասպիրանտներն ու մագիստրանտները, որպես ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետներ, պահանջված են հանրային տեղեկատվական-մասնագիտական դաշտում և աչքի են ընկնում Հայաստանի սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրների մեկնաբանմամբ և իհարկե գիտական հենքով լուծումների առաջադրման իրենց ազատ ու անկախ դիրքորոշմամբ: Նրանց խոսքը տարբեր լրատվական հարթակներով հասանելի է մեր հանրությանը, մարդկանց, ովքեր անտարբեր չեն երկրի զարգացման տեսլականի ու հեռանկարների ուղիների փնտրտուքի հանդեպ:

Այս տարիների ընթացքում, ՀՀ պետական կառավարման մարմինների առաջարկություններով, ՀՊՏՀ գիտական ներուժի կենսագործմամբ իրականացվել են շուրջ 6 տասնյակ հետազոտական աշխատանքներ, որոնք խմբային մենագրությունների ձևաչափով հրապարակվել են «Ամբերդ» մատենաշարով, որոնցից շատերի գիտական արդյունքը իր տեղն է գտել ՀՀ գործադիր իշխանության գործնական զինանոցում:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնը 2019 թվականից ակտիվ քաղաքականություն է վարում տնտեսագիտական միտքը հանրամատչելի դարձնելու ուղղությամբ: Դրա արդյունքն է տարվա կտրվածքով 6 անգամ լույս տեսնող «Ամբերդ» տեղեկագիրը, որի լավագույն հոդվածների Հատընտիրն այժմ Ձեր ձեռքին է:

Մաղթում եմ Կենտրոնին գիտական ու ստեղծագործական նորանոր բարձունքների նվաճում, ի շահ ոչ միայն ՀՊՏՀ գիտական համբավի ու վարկանիշի տարածման, այլ նախ և առաջ ի շահ մեր Հայրենիքի կայուն զարգացման ու առաջընթացի:

Ձեր՝ Դիանա Գալոյան

Հարգելի ընթերցող

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 10-ամյակի կապակցությամբ Ձեզ է ներկայացվում «Ամբերդ» տեղեկագրի Հատընտիր թողարկումը, որն, իր բնույթով, արդեն չորրորդ տարին թևակոխող հանրամատչելի հոդվածներով հարուստ այս հանդեսի կենսագործունեության յուրօրինակ հաշվետվությունն է:

Հաշվի առնելով գիտական և հետազոտական աշխատանքների յուրահատկությունը և այն, որ տվյալ արտադրանքն ունի իր մասնագիտական սահմանափակ լսարանը, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի թիմը նախաձեռնեց հանրամատչելի տեղեկագիր հրատարակելու գործընթացը, փորձելով ՀՊՏՀ դասախոսական, ասպիրանտական և ուսանողական կազմի տնտեսագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական վերլուծություններն ու մտքերը հնարավորինս հանրամատչելի ներկայացնել ու դրանով իսկ, այն առավել հասանելի դարձնել հանրության լայն, նաև ոչ մասնագիտական շերտերին:

Հպարտությամբ կարող ենք նշել, որ այս տարիների ընթացքում «Ամբերդ» տեղեկագրի էջերում հանդես են եկել ոչ միայն ՀՊՏՀ գիտական շրջանակներին հայտնի անձինք, այլ նաև հանրապետության ու նրա սահմաններից դուրս ճանաչում ունեցող գիտնականներ, որոնց համար սկզբնական շրջանում մի փոքր դժվար էր իրենց գիտական մտքերն ու խոհերը առավել հանրամատչելի ներկայացնելը, սակայն այս գործընթացը ժամանակի ընթացքում բյուրեղացավ ու այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ «Ամբերդ» Տեղեկագիրը դարձել է առավել ընթերցվող և գնալով մեծացնում է իր ընթերցողի շրջանակը:

Հատընտիր այս համարում տեղ են գտել նախորդ տարիներին հրապարակված ու դեռևս արդիականությունը չկորցրած շուրջ երկու տասնյակ հոդվածներ, որոնք հավաքվել են ըստ համապատասխան խորագրերի: «Ամբերդ» տեղեկագրի թիմն արդեն երրորդ տարին է հատուկ ուշադրություն է դարձնում օտարալեզու ընթերցողին և տարվա վերջին երկու համարների հոդվածները հրապարակում են ռուսերեն և անգլերեն լեզուներով, միաժամանակ, հայալեզու բոլոր հոդվածներն ունեն ռուսերեն և անգլերեն համառոտագրեր: Տեղեկագիրը հրապարակվում է նաև էլեկտրոնային տարբերակով ու չունի հասանելիության որևէ սահմանափակում: Այս մոտեցումը ևս նպատակ ունի մեծացնելու ընթերցողների շրջանակը: Այս տարիներին հրապարակվել են նաև հանրությանը հուզող թեմատիկ համարներ, մասնավորապես՝ համավարակին, 44-օրյա պատերազմին և ռուս-ուկրաինական հակամարտությանն առնչվող:

Տեղեկագրի հոդվածներում բարձրացվող հարցերի ընդգրկուն շրջանակը և ընթերցողի, ինչպես նաև լրատվական դաշտի շահագրգիռ վերաբերմունքը դրանց մեկնաբանման նկատմամբ, մեզ հուշում է, որ մենք ընթանում ենք ճիշտ ճանապարհով:

Շարունակեք կարդալ «Ամբերդ» տեղեկագիրը, որի յուրաքանչյուր նոր համարը, օպերատիվ և հանրամատչելի արձագանքն է մեզ հուզող այսօրվա խնդիրների ու նաև դրանց լուծման ուղիների նախանշման մասնագիտական մեկնաբանումը:

Հարգանքով՝ Դավիթ Հախվերդյան